

# ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻՐ 2

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ  
ԵՒ ԲԱՑԱՏՈՒՄ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ

ՅԱՐՈՒԹՅԱՆ ՔԻՐՔԵՏԱՆ

ԳԻՐԸ 2

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՊԱԳՐՈՒԹՅԱՆ

ՆՈՐ ՁԵԿՆՈՐՈՒՄ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



## Ա. ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

6

1. ԱՐՔԻԻՐԸ - Դանիել Վարուժան 7  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*
2. ԹԱՐԹԱՐ - Րաֆֆի 10  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*  
- *Կը կարդա՞նք... Գիրք... Թերթ... Համացանց...*
3. ԶԱՐՆՈՒԱԾ ՈՐՍՈՐԴԸ - Ռուբեն Զարդարեան 17  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*
4. ԱԼՊԵԱՆՆԵՐՆ Ի ՎԵՐ - Գրիգոր Զօհրապ 21  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*
5. ԵՐԿՐԱԳՈՒՆԴԻ ՓՈՐԻՆ ՄԷՋ - Ժիլ Վերն 26  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*



## Բ. ՄԱՐԴԵՐ... ԸՆԿԵՐՆԵՐ...

34

6. ԻՄ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՓՈՂՈՑՄ - Զապէլ Եսայեան 35  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*
7. «ԵՍ»Ի ՄԱՐԴ ՄԸ - Լեւոն Շանթ 41  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*
8. ԲԱՆՏԻ ՕՐԱԳԻՐ - Լեռ Կամսար 46
9. ԷՍ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՕՐԵՐ... - Մուշեղ Գալշոյեան 49  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*
10. ԲԱՐՉՐԱՅՈՒՄ - Վահան Թեքեան 54
11. ՇՈՂՈՔՈՐԹԸ - Յակոբ Պարոնեան 56  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*
12. ԳԻՒՂԸ - Հրանտ Մաթեւոսեան 63
13. ՀԻՒՂԸ - Սիսաք Մեծարեան 68  
- *Լեզուական-Գործնական Աշխատանք*  
- *Կը կարդա՞նք... Գիրք... Թերթ... Համացանց...*



## Գ. ՔԱՂԱՔՆԵՐ... ՎԱՅՐԵՐ...

74

- 14. ԳԵՂԵՑԻԿ ԾԵՐՄԱԿ ՁԻՆ** - Ուիլիամ Սարոյեան 75  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*
- 15. ԱՌԱՋԻՆ ԱՆՁՐԵԻԸ** - Պօղոս Սնապեան 81  
*- Կը կարդա՞նք... Գիրք... Թերթ... Համացանց...*
- 16. ԵՐԵՎԱՆ-ԷՐԵՔՈՒՆԻ** - Պարոյր Սեւակ 88
- 17. ԴԵՊԻ ՃԱՂԿԱՋՈՐ** - Կարեն Սիմոնեան 90  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*
- 18. ՕԳՈՍՏՈՍ** - Նիքոս Քազանժաքիս 96  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*
- 19. ԱՅԳԵՍՏԱՆԻ ԱՌԱԻՑԸ** - Գուրգէն Մահարի 100  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*
- 20. ՈՒՂՏԻՆ ՏՈՒՆՂԱՐՉԸ** - Վահան Թոթովենց 106  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*
- 21. ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ ԶԱՂԱՅՔԷՍ** - Ալֆոնս Տօտ 112  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*



## Դ. ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ

116

- 22. ԱՍՔ՝ ԾԱՌ ՏՆԿԵԼՈՒ ԱՌԹԻ** - Զաւէն Սիւրմէլեան 117  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*
- 23. ԿԱՂԱՆԴԻ ԻՐԻԿՈՒՆ** - Սիամանթօ 121
- 24. ՖԵՏԱՅԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ** - Ռուբէն 124  
*- Կը կարդա՞նք... Գիրք... Թերթ... Համացանց...*
- 25. ԿՈՐՍՈՒԱԾ ԴՐԱԽՏԸ** - Հրաչեայ Քոչար 132  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*
- 26. ԳՈՎՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ** - Եղիշէ Չարենց 138  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*
- 27. ԼԵՈՒԸ** - Զարեհ Խրախունի 142  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*
- 28. ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ** - Ակսէլ Բակունց 146  
*- Լեզուական-Գործնական Աշխատանք*

## ՈՒՍՈՒՑԻՉԻՆ ՀԵՏ

157



## Առաջին Բնաբան ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԵԱՆ ՅԵՏ

- Ի՞նչ է վայրի բնութիւնը:
- Աշխարհի այն վիճակը, որ չէ փոփոխուած մարդուն կողմէ - բնութեան միակ արարածին, որ գիտէ աշխատիլ՝ շինել ու քանդել... Նախնական մարդը վախցած է բնութենէն, բայց եւ այնպէս սիրած է զայն - իր սնուցիչ մայրը:
- Մարդը, անհատ թէ բնակչային խումբ, յաճախ ձեւաւորուեր է զինք շրջապատող բնութեան պատկերով: Հարիւրաւոր սերունդներու նկարագիրը ցոլքն է եղած իրենց բնավայրին:
- Ապա, կամաց-կամաց, մարդը փոխակերպեր է իր բնավայրը՝ շինելու, արտադրելու մղումով. երբեմն՝ սակայն՝ նաեւ քանդելու...

- Վայրի, կոյս բնութիւնը՝ իր զանազան երեսներով.-
- Երբեմն լուռ ու խաղաղ՝ ինչպէս մթին քարայր... Երբեմն փոթորկալի՝ ինչպէս մեռաւոր լեռնագագաթ կամ անսահման ովկիանոս - լեռնագնացներու, նաւորդներու խռով հոգիին պէս...
- Կամ դեռ՝ աւելի՛ հեռու, աւելի՛ վայրի բնութիւն մը - ինչպէս գիտա-երեւակայական գործերու արտերկրային աշխարհները, կամ առաջին աստղանաւորդներու, լուսնագնացներու հիացած աչքերուն պարզուող տեսարանները...

- Երեսներ՝ որոնք կը ներկայացնեն հեռաւոր այդ աշխարհները, այդ բնութիւնը՝ առանց մարդու - թէւ միշտ՝ մարդու աչքով ու հոգիով նկարուած: Բնութիւն մը՝ ինչպէս եղած ըլլալու է նախքան մարդը, կամ թրեւս ըլլայ... մարդէն ետք:

Բայց... կարդանք հատուածները:

# 1 ԱՂՔԻՒՐՐ

Վայրի բնութեան այս պատկերը մաս կը կազմէ Դանիէլ Վարուժանի «Յրաշքին Աղբիւրը» երկար քերթուածին:

Բանաստեղծը մեզի կը ներկայացնէ աղբիւրը երկու մասով. նախ՝ արտաքինը, զգայարանքներուն խօսողը - գոյներ, ծայներ: Ապա կ'անցնի անոր ստորերկրեայ մասին «հեռուներ եւ խորեր», «թաքուն անձաներ»...:

«Աղբիւրը», ուժեղ ու ազատ երեակայութեան արդիւնք, գրուած է նաեւ աւելի ազատ ոճ ու ձեւով, ինչպէս էր մեզի արդէն մասամբ ծանօթ «Կարմիր Յող»ը:

1.

Աղբիւրը, տե՛ս, ինչպէս հօգոր կը բխի  
Ժայռին ծոցէն գուռին<sup>1</sup> մէջ:  
Սարաւանդէն<sup>2</sup> թխապըտող<sup>3</sup> մորենին  
Անոր վըրայ է կախուեր:

Որքա՛ն մարգրիտ ակին մէջ.  
Եւ գուռին մէջ որքա՛ն լոյս:  
Հովիտին խորը պահուած՝  
Ան աղամանդ ու երգ է,  
Երգ մըն է ան մենութեան մէջ գըլգըլուն,  
Որ կ'ունկնդրէ մայր բընութիւնը շուրջի:

2.

Հեռուներէն ու խորերէն ան կուգայ.  
Կ'անցնի գաղտնի անձաներէ, ուր առկախ  
Շըթաքարեր<sup>4</sup> կան լազուարթ<sup>5</sup>,  
Նայաղներու<sup>6</sup> աչքերուն պէս արտաստող:  
Հոն կայ սառոյց բիւրեղեայ,  
Որուն հագիւ կը հասնին  
Վիմապատառ<sup>7</sup> արմատներն մայրիներուն.  
Հոն կան բրածոյ աղամանդեայ խըլուրդներ<sup>8</sup>,  
Սարգարտացած հին օձեր.

1ա. Ի՞նչ ձեւ գործածուած է՝  
աղբիւրի նկարագրումին  
«բացումը» անմիջական  
դարձնելու համար :

1բ. Տող 5էն 8՝ ընդօժէ՛  
այն չորս բառերը, որոնք՝  
աղբիւրի նկարագրումին  
մէջ՝ փոխաբերութիւն կը  
կազմեն: Անոնք մարդկային  
ո՞ր զգայարանքներուն կը  
կապուին:

2. Ինչե՞ր կ'երեակայէ  
բանաստեղծը՝ հողին տակ,  
ջուրին անցած ճամբուն  
վրայ (եօթը-ուք բաներ...):  
Թուէ՛, եւ ցո՛յց տուր, որ  
միայն երեակայութեան  
չեն կռթնիր, այլ իրական-  
գիտական հիմ ունին...

## ԲԱՅԱՏՐԵԼԷ ԵՏՔ

1. Այս կտորին երկու  
մասերը բանաստեղծին  
կողմէ «բռնուած են»

Հոն կան հուրեր, լոյժ ոսկիի լըճակներ,  
Լայնածաւալ անտառներ՝  
Իրենց մէջի մրրիկներով ամխասցած՞...

Հեռուներէն ու խորերէն ան կու գայ<sup>10</sup>...:

1. Գոռ.- Աղբիւրի աւազան:
2. Սարաւանդ.- Լերան դուրս ցցուած մաս. բարձրաւանդակ:
3. Թխապտուղ.- Թուխ, մթագոյն պտուղ ունեցող:
4. Շթաքար.- Ստորերկրեայ ջուրերու շիթ-շիթ հոսումէն «ձուլուած»՝ առկախ ժայռակտոր:
5. Լագուարթ.- Մութ կապոյտ:
6. Նայադ.- Ջուրերու երեւակայական աղջիկ. ջրանուշ:
7. Վիմապատառ.- Ժայռ պատռող, փշրող (բանաստեղծի բառ):
8. Խլուրդ.- Մուկի նմանող կենդանի:
9. Անտառներ՝ ամխասցած իրենց մէջի մրրիկներով:
10. Հեղինակին կենսագրութիւնը՝ տե՛ս Գիրք 1:

տարբեր միջոցներով,  
տարբեր «աչք»երով:  
Առաջին մասը սկսող  
հրամայական բայը եւ  
երկրորդ մասը բացող  
«հեռուներէն ու խորերէն»  
բառերը թո՛ղ օգնեն քեզի՝  
գտնելու այդ  
տարբերութիւնը:

2. Գծանկարով մը  
ներկայացո՛ւր Աղբիւրը:  
Կրնաս ընտրել անոր ար-  
տաքինը, կամ ներքնամասը՝  
*հեռուներէն ու խորերը*:  
Ձեւերը եւ գոյները կրնաս  
փոխ առնել Դ. Վարուժանէն:

## ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ



Ոճը զուսպ է, բայց լեցուն՝ եռանդով մը որ կու գայ գեղեցիկ, ուժեղ իրականութեան  
մը նկարագրումի թափէն: Պէտք է զգուշանալ «երգելէ» կամ «ճառելէ». նաեւ անոնց  
հակադիր վտանգէն՝ միօրինակութենէ:

Ինչպէս միշտ՝ Վարուժանի մօտ կէտադրութիւնը կը պահանջէ յատուկ ուշադրութիւն:

Ուշադիր՝ նաեւ ձայնի եղանակի գլխաւոր փոփոխումներուն, կապուած՝ իմաստի.  
«հզօր» սկիզբէն ետք, Մաս 1ը կը շարունակուի մեղմացումով: Մաս 2ը մեղմ կը սկսի  
եւ կ'ուժեղանայ աստիճանաբար, մնայուն խորհրդաւոր եղանակով մը:

## Լեզուական-Գործնական Աշխատանք



**1. Գասարանը բացատրեցէք բերանացի: Յետոյ ամէն մէկով կազմէ՛ հետաքրքրական նախադասութիւն մը, որ ցոյց տայ իմաստը եւ գործածութիւնը.-**

*օ աղբիւր օ աւազան օ գոռ օ հոր օ շարրուան օ ջրամբար օ ամբարտաշ*

**2. Ամէն մէկ բացատրութեան՝ դի՛ր յարմար բառը.-**

*օ զոհար օ աղամանդ օ մարգրիտ օ զոհարեղէն օ ոսկեղէն*



ա. ....ը թանկագին քարերէն ամենաթանկագինն է, բայց կազմուած է պարզ բնածուխէ:

բ. ....ը որոշ ծովային խեցիներու մէջ կազմուած գնդիկն է:

գ. Յակինթը, գնրուխտը, ադամանդը՝ թանկագին քարեր են, այսինքն .....ներ:

դ. Ոսկիէ շինուած եւ մարմինի վրայ կրուող զարդ մը կը կոչենք .....

ե. Երբ ոսկի զարդ մը իր վրայ գամուած գոհարներ ունի, ..... կը կոչուի:

### 3. Գիծով մը իրարու կապէ՛ հոմանիշները.-

<i>աղբիւր</i>	<i>կրակ</i>
<i>ծայռ</i>	<i>առանջնութիւն</i>
<i>սարաւանդ</i>	<i>ծածուկ</i>
<i>հովիտ</i>	<i>սպառաժ</i>
<i>հուր</i>	<i>չոր</i>
<i>մենութիւն</i>	<i>լեռնակող</i>
<i>թարուն</i>	<i>ակ</i>

### 4. Ձեռնում.-

- Երկրորդ տունի առաջին երկու տողերը կը կազմեն մէկական անջատ նախադասութիւն: Բայց իրենց ո՞ր անդամը չէ գրուած: Աւելցո՛ւր՝ լրացնելով:
- Այսպիսի «զեռնում» նախադասութիւններ կը գործածուին՝ որոշ նպատակով: Փորձէ՛ հասկնալ ու բացատրել...:

### 5. Չափ-յանգ.-

- Համբէ՛ մաս 1ի տողերուն **վանկերը**. քանի՞ վանկ՝ գրէ՛ ամէն մէկուն դէմ:
- Առաջին, երրորդ, իններորդ եւ տասներորդ տողերը ինչպէ՞ս կը բաժնուին, ի՞նչ չափով.- *Աղ-բիւ-րը-տես - ինչ-պէս-հը-գոր - կը բը-խի...* ? + ? + ?
- Նոյն հարցումը՝ տողեր 2ի, 4ի, 5ի, 6ի, 7ի եւ 8ի համար.- ? + ? :
- Բոլոր տողերուն մէջ, կը գտնենք երկու չափի վանկախումբեր («ոտք»եր). որո՞նք են այդ երկու չափերը, քանիակա՞ն վանկ...:
- **Յանգեր**.- Իսկ յանգե՞րը՝ տողավերջի վանկե՞րը...: Դ. Վարուժան փորձա՞ծ է իրարու յարմարցնել զանոնք տողէ տող (նկատի մի՛ առնել վերջին մասէն քանի մը պատահական նմանութիւններ...):



# ԹԱՐԹԱՐ 2

*Րաֆֆի յաճախ նկարած է հայրենի բնութիւնը: Իր մէջ միշտ զգալի է ձգտումը՝ Հայ մարդու նկարագիրը կապելու այդ բնութեան յատկանիշներուն. եւ ասոնց միջոցով գտնելու՝ հայու «հոգեկան աշխարհագրութիւնը»:*

*Հոս, այս մօտեցումը կիրարկելով, Րաֆֆի մեզ կ'առաջնորդէ մինչեւ հերոսական Արցախի բնութեան ամենէն անառիկ անկիւնները:*

*Նախ գիւղացի աղջիկ մըն է որ կը գրաւէ գրագէտին ուշադրութիւնը. իր հսկայ շան հետ անտառին մէջ՝ առանձին, ան մեզի կը թելադրէ՝ իրարու հիւսուած՝ քաջութեան եւ ինքնապաշտպանութեան գաղափարները:*

*Բայց Րաֆֆիի ուշադրութեան կ'արժանանայ մանաւանդ գրութեան բուն նիւթն ու բուն «հերոսը»՝ Թարթար գետը: Ան կ'արտայայտէ բնութեան տարերային ուժերը եւ ազատութեան ու պայքարի ձգտումները, որոնց ծնունդն իսկ է Արցախի բնակիչ Հայ մարդը:*

## 1. Մտայլութիւն է:

Առջեւից օձի նման սողում է հազիւ նշմարուող մի շաւիղ<sup>1</sup>, որ տանում է անտառապատ լեռների կողքերով: Իսկ վերեւից՝ տարածում է հսկայական ծառերի կանաչագարդ կամարը: Արեգակի ճառագայթները չեն անցնում նրա խիտ սաղարթից<sup>2</sup>: Ճիւղերը, ոստերը, տերեւները սիրալիր գրկել են միմեանց<sup>3</sup>:

Շաւիղը նեղ է: Նա անթիւ ելեւջներ ունի: Երբեմն քարձրանում է զագաթների վրայ, երբեմն իջնում՝ մթին ձորերի ու նեղ կիրճերի խորը: Մայլակի անիւները աշխարհի սկզբից մուտք չեն գործել այս կուսական<sup>4</sup> անտառների մէջ: Մարդը միշտ սարսափել է իր համար ճանապարհի հարթել այնտեղ:

Ձին չի յանդգնում ոտք կոխել սեպ<sup>5</sup> լանջի վրայ. մի սխալ քայլ, մի թեթեւ սայթաքում<sup>6</sup> եւ նա պիտի գլորուի անդունդ...: Ստիպուած ես զնալ ոտով:

2. Տիրում է լռութիւն: Անտառի մէջ մի տերեւ իսկ չի շարժում: Կէսօրուայ տօթը բոլոր արարածներին հալածել է դէպի ծնակների<sup>7</sup> խորը, քարայրների մթու-

1ա. Ո՞ր մանրամասնութիւնները (բուսականութիւն, երկրի մակերես...) կը շեշտեն Թարթարի շրջանին վայրի վիճակը:

1բ. Այս բնութեան մէջ, մարդ-արարածը ի՞նչ հետք կամ նշան ձգած է. ինչպիսի՞նչ նշան է. ընդգծե՞լ մասի սկիզբէն՝ անոր համար գործածուած որակումները - ածական, համեմատութիւն, փոխաբերութիւն...:

2. Հոս՝ բնութեան եւ ապրող արարածներու մասին ըսուածները կը շեշտեն նախապէս





թիւնը: Թոշուններ անգամ չեն երեսում: Ամէն ինչ նիր-  
հում է, ամէն ինչ հանգստանում է խաղաղութեան մէջ:

3. Բայց ահա ինչ որ մի բան խշխշում է:

Աչք ես պտտցնում շուրջը. եւ ահա՛ պտղալի շլորե-  
նու<sup>8</sup> ճիւղերից քարշ է ընկած մի էակ: Ծառերի խտու-  
թիւնը թոյլ չի տալիս պարզ տեսնել նրան: Երեսում է  
մի կարմիր շապիկ միայն, որ իջնում է մինչեւ մերկ  
սրունքներ: Նայում ես. այժմ նկատում ես կնոջ մազե-  
րի երկար հիւսքեր, որ ծածանում են ճիւղերի հետ:

Այդ ի՞նչ է. որտեղի՞ց յայտնուեց այդ անտառային  
փերին<sup>9</sup>: Ի՞նչ գործ ունի այս վայրի ամայութեան մէջ:

Դա մի գիւղացի հայ աղջիկ է, որ հեռաւոր գիւղից  
եկել է անտառային պտուղներ քաղելու: Նա քաղում  
է հասուն վայրի սալորները եւ խնամքով լցնում է  
գամբիւղի մէջ, որ կախած ունի թեւից:

Նա մենակ չէ: Փոքր ինչ<sup>10</sup> հեռու, գլուխը առջեւի  
թաթերի վրայ դրած, պառկել է նրա մտերիմ ընկերը՝  
մի ահագին շուն: Փորձի՛ր մօտենալ մենաւոր աղջը-  
կան, այդ գազանը կը պատառոտէ քեզ:

Աղջիկը ետ նայեց: Չարմանալի արագութեամբ՝ նա  
ցատկեց ծառից, եւ մի ակնթարթում անյայտացաւ  
անտառի մթութեան մէջ:

Այլեւս ինք՝ սատանան չի գտնի նրան: Նա երկիւղ  
չունի. նա ամէն տեղ կը գնայ: Նա ծնուել է եւ սնուել<sup>11</sup>  
այդ մամռոտ<sup>12</sup> ծառերի հետ. նրա օրօրոցն են եղել  
այդ վայրի ապառաժները:

4. Գնում ես, գնում ես՝ նոյն լռութեան, նոյն անշար-  
ժութեան մէջ: Յանկարծ անտառի խորհրդաւոր հան-  
գըստութիւնը աղմկում է. կարծես՝ մի խուլ որոտ...  
Որքան առաջ ես գնում՝ լեռները աւելի են որոտում:

Նայում ես դէպի երկինքը. տեսնում ես նոյն նուրբ  
կապոյտը, նոյն պայծառ արեգակը: Ամպի մի փոքրիկ  
պատառ անգամ չի երեսում:

Բայց որտեղի՞ց է լսում այդ խուլ, սարսափեցնող  
որոտը: Մտածում ես՝ անդունդի մէջ կատարում է մի  
սոսկալի խռովութիւն. բնութեան տարերքը<sup>13</sup> կռում

ստացուած ո՞ր  
տպաւորութիւնը:

3ա. Ինչո՞ւ անակնկալ  
կ'ըլլայ աղջկան երեսումը:

3բ. Աղջիկը անկասկած  
քաջ է. բայց իր  
քաջութիւնը ինչո՞վ աւելի  
ես ամուր, դրական  
կը դառնայ (յիշէ՛, մուտքի  
բացատրութեան մէջ,  
*քաջութեան* կողքին  
գործածուած երկրորդ  
կարեւոր բառ մը...):

3գ. Աղջիկը նկարագրի  
ուրիշ ի՞նչ գիծ  
կը ցուցաբերէ հոս՝ մասին  
վերջը - ընտանութեա՞ն...

4. Պատմողը, հատուածը  
գրած ատեն, արդէն  
գիտէ՝ ի՞նչ է որոտումին  
պատճառը: Բայց  
սկիզբէն արագ մը կը  
յայտնէ՞ ատիկա մեզի:

են իրար հետ: Ժայռերը մոնչում են: Խաղաղ մթնոլորտը սկսում է դողդողալ. ուղեւորին տիրում է սարսուռ<sup>14</sup>:

5. - Դա Թարթար գետի ձայնն է լսում,- հանգրստացնում է առաջնորդը:

- Շուտ կը հասնե՞նք:
- Սարի միւս կողմն է:

Անցնում ես սարը, անցնում ես սարի միւս կողմը: Բացում է մթին անդունդ: Նայում ես, նայում ես անդունդի խորութեան մէջ. աչքերդ սեւանում են, գլուխդ պտոյտ է գալիս. ոչինչ չես տեսնում: Յետոյ երեւում են ծառերի հաւասար կատարներ: Այդ ծառերը աստիճանաբար ցած են իջնում եւ լցնում են կանաչապատ ձորի ամբողջ խորութիւնը:

Ուրիշ ոչինչ չի երեւում:

- Ահա՛ Թարթարը,- ցոյց է տալիս առաջնորդը, ձեռքը մեկնելով<sup>15</sup> դէպի ձորի խորքը:

6. Բայց Թարթարը չի երեւում: Նա տաշել է ապանաժի միապաղաղ<sup>16</sup> զանգուածը. նա հազարաւոր քայլերով ցած է իջել դէպի երկրի սիրտը. նա դարե՛ր գործել է, մինչեւ ժայռերի միջով բաց է արել իր համար մի նեղ ճանապարհ:

Այդ ճանապարհի մէջ ճնշուած, հսկայ վիշապի նման նա գալարում է, որոտում, մոնչում, կատաղի աղմուկ հանում. զայրանում է՝ ինչո՞ւ չի կարողանում աւելի լայնացնել իր ուղին: Վիթխարի լեռները երկու կողմից սեղմում են նրան, եւ նա բարկացած՝ աւելի աղաղակ է բարձրացնում:

Այդ ճնշուած, նեղուած դրութեան<sup>17</sup> մէջ էլ Թարթարը վեհ է: Բնութեան խստութիւնը չի կարողացել յուսահատեցնել նրան. նա միշտ կռուել է եւ շարունակում է կռուել իր առաջ դրուող խոչընդոտների<sup>18</sup> դէմ:

7. Երբեմն լեռներից ցած է գլորում մի ահագին քարաժայռ: Նա կտրում է գետի ճանապարհը: Ջրերի ընթացքը կանգ է առնում:

Կատաղած Թարթարը ուռչում է եւ հետզհետէ աճելով՝ հաւաքում է իր ուժերը: Մի հարուած, մի հար-

Ի՞նչ նպատակով:

5ա. Ո՞ր երկու բայերը կրկնուած են: Կրկնութիւնը ի՞նչ տպաւորութիւն կը ստեղծէ:

5բ. Մասի վերջը, առաջնորդին արտասանած խօսքը ինչո՞ւ անիմաստ է: Բայց նաեւ՝ ինչո՞վ տպաւորիչ:

6ա. Գտի՛ր եւ արտագրե՛ այս մասին բոլոր բայերը: Ի՞նչ «գործ» կը պատմեն անոնք. ի՞նչ է անոր կարեւորութիւնը:

6բ. Մասի վերջը՝ գետին կեցուածքը **մարդու յատուկ** ո՞ր ածականով կը տրուի. իսկ իր «գործ»ը՝ ո՞ր կրկնուող բայով:

7. Հոս ի՞նչ օրինակով պիտի փաստուի, թէ՛ «Թարթարը... շարունակում է կռուել...»

### ԲԱՅԱՏՐԵԼԷ ԵՏՔ

1. Գտի՛ր, թէ 1870ի շուրջ գրուած այս էջով՝ Բաֆֆի ի՞նչ դաս կը հանէ գետին օրինակէն. մանրամասնէ՛:

2. Կարդա՛ էջեր 14-15ի



*Թարթարի  
կիրճին ելքը*

*Լուսանկար  
Ջ. Սարգսեանի*

ուած եւս... եւ ահա՛ ահագին քարաժայռը ետ մղուեց. կատաղի ալիքները մի թեթեւ տաշեղի նման տանում են նրան, տանում են, եւ զարկելով ափերի ապամաժներին՝ խորտակում են, փշրում են:

Եւ գետը ստանում է կրկին՝ իր բնական ընթացքը<sup>19</sup>...

«Թերթ... Գիրթ...»ը:  
Ընտրե՛ Հատուած 1 կամ  
Հատուած 2. վերապատմե՛ք  
քու բառերով՝ մնայով  
գրուածին հաւատարիմ:

*\* Ասորդանիշ դրուած է արեւելահայերէնի յայտուկ բառերու կամ բառինաստրներու վրայ: Երբեմն նաեւ՝ պարսկալեզու ընթացքով/օտարալեզու ձեւերու:*

- |   |  |
|---|--|
| 1. Շախիդ.- Նեղ ճամբայ:                                    | 2. Սաղարթ.- Ծառի ճիւղերու ամբողջութիւնը: |
| 3. Սիմեանց.- Իրար(ու):                                    | 4. Կուսական.- Անձանօթ մնացած, չկոխուած:  |
| 5. Սեպ.- Ցից, գորտուր գառիվեր ունեցող:                    | 6. Սայթաքում.- Սահիլը:                   |
| 7. Ծմակ.- Արեւ չտեսնող լեռնային խորշ:                     | 8. Շլորենի.- Վայրի սալորենի:             |
| 9. Փերի.- Հուրի, կնոջ երեւոյթով ոգի:                      | 10. *Փոքր ինչ.- Քիչ մը:                  |
| 11. *Սնուել (սնանիլ).- Սնունդ ստանալ:                     |  |
| 12. Սամռոտ.- Սամռոտով՝ գորգանման բոյսով ծածկուած:         |  |
| 13. Տարր (տարերթ).- Բնութիւնը կազմող գլխատր նիւթ կամ ուժ: | 14. Սարսուռ.- Դող:                       |
| 15. *Սեկնել.- Երկարել:                                    | 16. Միապաղաղ.- Միակտուր:                 |
| 17. *Դրութիւն.- Վիճակ, կացութիւն:                         | 18. Խոչընդոտ.- Արգելք:                   |
| 19. Հեղինակին կենսագրութիւնը՝ տես Գիրթ 1:                 |  |

## Լեզուական-Պորճնական Աշխատանք



**1. Գտի՛ր եւ գրե՛, թէ ինչպէ՛ս ըսուած է դասին մէջ (մասեր 1, 2 եւ 3).-**

ա. Դիւղերը ամուր հիւսուած են իրարու: .....





## 2 1992-94. ՇՈՒՇԻԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՎԱՐԱՆԳԱԵՐԳՉԱԽՈՒՄԸ

² նո³ ԷՇ ԸԹ³ Իձոձ³ ԸԿՅ  
 ½³ նձոձՅուԿՅ ԸՂՇ Ըոն³ Թ³ Իձ 1»ն  
 Է³ Ծ³ օ ԲձոձԸԸ ² ն³ Ը  
 Ծ³ Կձոձ»³ ԿՅ Իձ նձ³ ն³ Կձ, ձն Ըն  
 »նՇԻ³ Է³ ն¹ Ի ԿնՂԿ ² նի³ ԲՂ Է  
 Ի ձձձ»³ ԿՇ »օ Կձձձ³ Կ  
 »նՇԻ³ Է³ ն¹ Ի ԷԿ»³ Ի Ըձ  
 ձօձձօՇձԿձ»նձոձ Ը³ Ը³ Ի »ձ  
 Շ³ Կձ»նձձ Ըն · ձձձձձձձԿձ ԷՇն»ԷՇ  
 1³ նձձձ ԿՅ »օ ԸԹ³ Իձոձ³ ԸԿՅ  
 »ԷձձԿ»նձձ . ՆձԿ ՆՇՍԿ³ 1նձոձ»օ³ Կ  
 »օ ձ³ ն³ Էձոձձ, »օ Ը³ Ի նձԿ, »օ »ն. ձ³ Էձոձձ, »օ ԿԻ³ նձ³ Ի³ Կ ձօ . ն³ Ի³ Կ Էձձձ ԻԿ»ն.



Շուշիի «Վարանդա» երգչախումբը

Ի ձԿ³ Ի³ Կ »ձ³ Կ Ի³ նձ³ ն³ ԿՇ | Ի ³ ն³ Կ¹³ Տ »ն. ձ³ Էձոձձձ Ը³ Ը»ն. Կ»նձ ԲձոձԸԸ,  
 ² նո³ ԷՇ Ի ³ ն»ն ԸնՇ³ ԿԿ»նձօ, ՂձնՇՇ» »օ օն»օ³ ԿՇ ԸՂՇ: Ըձն ³ ½³ Ի ³ . նձօ³ Ի ³ Ը³ ԸՇ ԸՇ  
 »ն. ձ³ ԷձոձձԿ ձօ Ի ՇԻԿԻ³ ԸԿՅ Ը³ Ի նձԿձ ԸՇ³ ԷԿ³ Ի ն օն»օ³ ԿՇ ³ նձօ»ԷԻ³ ԷՂնԿ»նձօԿ  
 Կ»նԻ³ Ը³ օ³ Կ 16³ ձնՇԷ 1994ՇԿ, »օ ÷³ ԸձօԿ Ը³ Ծձ³ ԿԿ ԻԿ»ն Ի ³ Կ»ԷՂ »Ի Ը, »նձ ձօն³ Է-  
 ½ձօ³ նձ Ի ձօԿ Ի »ն³ 1³ նձ³ Կ, ՇՍ³ օ³ Կ, ձն ³ Ըձ ձ³ ՆձօԿ »նձ Ըն»Կձ Ըձ ԸՇ Ի ն³ ԸԻԿ»ն. ՂՇԿ,  
 Է³ ՆՍ³ ԿՇԿ Ի ն³ Ը½ձձօ»ն Ղ »ն. ձ³ Էձոձձձ »նՇօ³ . ձԿ³ Կ Կ 1³ Ըձոձձձձ Ը»ԷՇՇ Ն³ Ըձ...  
 Ծ³ Ը»ն. Կ»նձ, ձն ձՇԻ Շ ԸԻԿԿձձձձ ԲձոձԸԸ ԸՂՇ, ձՂԻ Ը Ղն ԸԻ³ Ծ. ձօՂՇՇ Շ Ն³ նԻՂ, ԸՇԿձ»օ ԸՇձ  
 Ըձ ԸԷՇձձ³ նձօձՇձ . Ի ԿՇՇԿձ: Ը»Ի ³ Ծ. ձօձՇՇ 1Ղձ »Է³ օ ԿձձՇՇԿձ Ը»ԷՇՇ, »օ Ը³ Ծձօձձ ԸՇ ԸՇ Կ  
 Ըձ ձն »Ի Ը Ը»ձ Ը³ նձն³ օ³ օ... | Ի³ Կձձ ձՇԻ Շ Բ³ նձօԿ³ ԻձօՇՇ:  
 Ը»Ի ձձ»ն. ձ³ Էձոձձձձ »նՇօ³ . ձԿ³ Կ Կ 1³ Ըձոձձձ Ն³ նԷԿ³ օ³ օ: ԲձօԻ ձԻ ԸձօԿ»Կ³ Ը  
 ½³ օ³ Ի, ձն Ըձ Ըձձ Ն»նձձ Ընն³ ԿձօԿձԻ:  
 - Ը»ԷՇ, ՇՍ Է³ ԿՇԻ, »նձ »Է . նԻ»ձ Կնն³ ԸՇԿ¹, Ըն ³ ձն»նձօԿ ԸՂՇ ձՇԻ Շ ÷ ձնձ»ձ Ը³ ն¹³ Է  
 Ը³ Ըձ¹ ձԿ Շձձձ . ՇԻ Կ³ Է ԸՂ ձօն Ըձ ԸՇ Կ Ն³ Ըն¹ »օ ձօն Ըձ ԷԻՇՇ Կնն³ ԸՇԿ¹...:  
 ½³ Ը³ ն օՂՇՇ»³ Կ, Էձձ Ի³ ն

>>> Խումբը եղել է Սյրեվանյանների, Շուշիում վրաններով գիշերել է Գանձասարում:

«Տեսնելով ազատագրուած Արցախը, քայլերով այս հողի վրայ, հասկանում եմ, որ աեղի քան իրական է Միացեալ Հայաստանի կերպրումը: Հայարտութիւնս իօւրերով նկարագրել չեմ կարող: Այս պահին միակ ցանկութիւնս Արարարը ազատագրուած տեսնելն է: Դրա համար պէտք է ամէն մէկս անեկնք հնարարն ու անհնարինը»,- ասում է ճամբարի մասնակից Արտեմը:

². Ը³ նՇԿ»³ Կ, |² ձ³ Է³ ԸՏ ձ³ ն»ն³ Ը»նձ





- բ. Հոսկէ կառք չէ անցած երբեք: .....
- գ. Բացարձակ անշարժութիւն է: .....
- դ. Ա՛լ անկարելի է որ մէկը գտնէ զայն: .....
- ե. Ապառաժները շատ ընտանի են իրեն: .....

**2. Թեթևոց՝ ար-ամփոփէ՛ նախադասութիւնները՝ ջնջելով ստորադասը (շեղագիր տրուած), անոր բայը վերածելով ածական-դերբայի՝ -ող, -ած...**

- ա. Առջեւէն օձի պէս կը սողայ շաւիղ մը, *որ հազիւ կը նշմարուի:*  
- .....
- բ. Կը նկատուին մազի երկար հիւսքեր, *որոնք կը ծածանին ճիւղերուն հետ:*  
- .....
- գ. Կ'երեւին ծառերու կատարներ, *որոնք կարծես մկրատով հարթուած են:*  
- .....
- դ. Գետը կը շարունակէ կռուիլ արգելքներուն դէմ, *որոնք կը կասեցնեն իր հոսանքը:* - .....

**3. Ըսէ՛ ու գրէ՛ արեւմտահայերէն.-**

- ա. Շաւիղը տանում է անտառապատ լեռների կողքերով: -  
.....
- բ. Ինչ որ մի բան խշխշում է: - .....
- գ. Սալորենու ճիւղերից քարշ է ընկած մի էակ: -  
.....
- դ. Գնում ես, գնում ես՝ միեւնոյն լռութեան, միեւնոյն անշարժութեան միջով: -  
.....
- ե. Նայում ես, աչքերդ սեւանում են, գլուխդ պտոյտ է գալիս. ոչինչ չես տեսնում:  
- .....

**4. Շարադրութիւն**

**Ա. Նիւթ.-** Ուշադիր կարդա՛ էջ 14-15ի թիւ 3 հատուածը, եւ հետետողաբար գրէ՛ «թղթակցութիւն» մը՝ արշաւի մը կամ ճամբորդութեան մը մասին, որուն մասնակցած ես: Ծշղէ՛, թէ ի՛նչ էր անոր նպատակը, ինչպէս ընթացաւ, եւ ինչո՛վ շահեկան եղաւ մասնակիցներուն համար: Ներկայացուցածդ կրնայ ըլլալ նաեւ տակաւին չիրականացած, բայց քեզի համար շատ փափաքելի ձեռնարկ մը:

**Բ. Նիւթ.-** Ի՞նչ է քեզի համար ազատ ըլլալ. ե՞րբ է որ ինքզինքդ ազատ կը զգաս, ե՞րբ՝ կաշկանդուած: Ջանա՛ յստակացնել մտածումդ՝ ազատութեան մասին ընդհանրապէս - ե՞րբ եւ որքա՞ն ազատ կ'ըլլայ, կամ կրնայ ըլլալ՝ անձ մը. ե՞րբ եւ որքա՞ն ազատ՝ մարդկային ընկերութիւնը...:





# ՉԱՐՆՈՒԱԾ ՈՐՄՈՐԴԸ

Ռուբէն Ջարդարեան Ծովքի ժողովրդական այս հեքիաթը լսած է ու մշակած՝ գրական-բանաստեղծական ոճով: Կը ներկայացնէ Այծեամ մը եւ Ռոսորդ մը՝ հայրենի բնութեան մէջ:

Այծեամ մը կը փախչի՝ վիրաւոր: Հալածիչը անոր ետեւէն կը բարձրանայ գագաթ, բայց չի յաջողիր զայն որսալ: Աւելին՝ ան չի գտներ էջքի ճամբան: Անէծքով «զարնուած» կը մնայ ու կը մեռնի հոն, բարձունքին վրայ:

Կը հասկնանք, որ հեքիաթին խորքը կազմուած է խոնարհ ժողովուրդի մէկ մաղթանք-երազով.- Ամենդ-արդարները պաշտպանուին եւ փրկուին, ու անոնց հալածիչները «զարնուին», պատժուին...

Այսօր, առաջին այս թելադրանքին կրնանք անելցնել երկրորդ մը.- Պէտք է բնութիւնը պահպանուի անեղծ եւ մաքուր. պէտք է արգիլուին ապրող էակներու բնաջնջումը եւ աշխարհի ընդհանուր ապականումը:

Նաեւ կը տեսնենք, այսպէս, որ գրութիւն մը կրնայ դիտուիլ տարբեր անկիւններէ, մեկնաբանուիլ մէկէ անելի ձեւերով:

1. Անկոխ ուղիներէ, օձի ճամբաներէ, քարերուն վրայէն Այծեամ<sup>1</sup> մը կը փախչի. անցած տեղերէն կարմիր արիւն կաթկթած է, եւ քարերը դեռ թաց են. կը վազէ՛, կը հեռանա՛յ. կոտոշները քարեր կը գլորեն դարվար<sup>2</sup>: Ապառաժներու վրայէն ցատկելով, կաքաւի ձագերը թոցնելով իրենց բոյնէն, լեռներէն հոսող ջուրերը պղտորելով կը սլանա՛յ, կը փախչի՛. սիրտը ուժգին խռոված է. վախը խիստ ըլլալու է:

Հեռուն՝ մարդ մը կ'երեւի. կապարճը<sup>3</sup> ուսին, աղեղը լարած՝ նետը կը քաշէ: Բայց վարէն, այդքա՛ն վարէն՝ նետը իր նշանին չի կրնար հասնիլ. լեռները ապառաժներ են ու ճամբայ մը չ'երեւիր, որ գագաթը տանի:

Դիմացի սեւ, մռայլ լեռան՝ Մաստառի<sup>4</sup> վրայէն Այծեամ մը կը վազէ, ու Ռոսորդն<sup>1</sup> ալ՝ ետեւէն:

2. Լեռներուն մէջ, ուր փշոտ կաղնիներ ու վայրի թըթենիներ կը բուսնին, ուր հազարաւոր անձանօթ ծաղիկներ իրենց գեղեցկութիւնը կը բանան ու կը գոցեն,- լեռներուն մէջ, գով անձաններու<sup>5</sup> ներսը, Այծեամը ձագ կը բերէ. գագաթներու թարմ դալարիքին<sup>6</sup> վրայ՝ ան իր ձագերը կ'արածէ:

## ՄԱՍ ԱՌ ՄԱՍ

1ա. Այս մասը ինչո՞վ լաւ մուտք մը կը կազմէ. պատմուածքին ո՞ր անհրաժեշտ տարրերուն մասին տեղեկութիւններ կու տայ մեզի:

1բ. Կէտադրական ո՞ր նշանները կը նպաստեն մթնոլորտի ստեղծումին: Ինչպիսի՞ մթնոլորտի...

2. Հոս պատմուածքի հերոսներէն ո՞ր մէկը կը տեսնենք: Ան բնութեան ո՞ր յատկութիւններուն իբր խորհրդանիշ դրուած է:

Ու Այծեամը լեռներու զաւակն է. այդ հսկայ քարերը թխսած են<sup>7</sup> ու անոնց վրայ բուսած մամուռը՝ կերակրած է զայն...: Մաստա՞նը զայն ծնած է. անէ՛ծք Այծեամին նետ քաշողին գլխուն:

3. Փախաւ Այծեամը, ու Որսորդը՝ անոր ետեւէն:

Բայց ճամբայ չկար, ու սողունի ոտք հարկաւոր էր մագլցելու համար: Ելա՛ւ, ելա՛ւ Որսորդը՝ Այծեամին ձգած կարմիր ցայտքերուն<sup>8</sup> հետքով. Որսորդը գնաց, մոռցած՝ թէ լեռը մահուան կը տանի ու իջնել չկայ: Այծեամին նետ քաշողը անէ՛ծքո՛վ կը մեռնի:

4. Գազաթը հասաւ ահա: Բայց Այծեա՞մը... չկար. լեռները անձաւներուն մէ՞ջ պահեցին զայն. ո՛վ գիտէ. Որսորդը շա՛տ փնտռեց, չկրցաւ գտնել:

Կատաղօրէն՝ ան խորտակեց քարին՝ կապարճը, նետը եւ աղեղը, ու անոնց կտորները հովերը տարին...

Հոս ու հոն արծիւները կը ճչային, իրենց ահագին թելերուն թափ տալով. անոնց բոյներուն մօտ փտած ոսկորներ ու փետտուած դիակներ ինկած էին: Կամա՛ց՝ կտոր-կտոր ամպեր կու գային ու թեթեւ շուքերով կը հեռանային: Կտրիճ Որսորդը, հիմա, լերան վրայ մինակ, կը վախնա՛յ. ու հոն արձագանգող իր անհաստատ ոտքերուն դոփիւնը զինք կը խռովէ:

5. Չառիվերը՝ դիւրին, բայց զառիվարը ահարկու է. Որսորդը մոռցած է՝ ուրկէ՛ վեր ելած է, ու ճամբայ մը չկայ, որ զինք վար տանի: Լեռն ի վար՝ աչքն իսկ հանգիստ սեւեռում չի կրնար ունենալ<sup>9</sup>: Այծեամին որսը անիծուած է, ու վար գահավիժող Որսորդը իր մահուան զարհուրանքը չափելո՛վ<sup>10</sup> պիտի մեռնի:

Յուսահատի աչքերով՝ ան կը նայի վար, ուր հորիզոնը կը ցածնայ լեռներուն վրայ ու զանոնք կը գրկէ: Տարտամ<sup>11</sup> ճառագայթում մը կը խաղայ հեռաւորութեան մէջ: Իրիկուան գով ստուերներուն մէջ, եղնիկները կը բքան<sup>12</sup>, ու մօտէն, հեռուէն՝ հովը զազաններու մռնչիւնի կտորներ կը ցրուէ ասդին-անդին: Ան կը պոռայ, տարօրինակ ձայներով, աղերսանքով օգնութիւն կը կանչէ. ու լեռներուն մէջ դիւահար<sup>13</sup> ծոմոռութեամբ կը ձայնը կ'արձագանգէ, կ'երկարի՛:

3. Իսկ հո՛ս՝ ո՞վ է հերոսը. ի՞նչ տիպի մարդիկ կը խորհրդանշէ: Ի՞նչ կ'ըսուի արդէն՝ իրեն սպասող ճակատագիրին մասին:

4ա. Անօգուտ փնտռտուքէն ետք, Որսորդին ո՞ր արարքը կ'արտայայտէ իր յուսահատ բարկութիւնը:

4բ. Ապա ի՞նչ զգացում կ'արթննայ «կտրիճ Որսորդ»ին մէջ. ո՞ր երկու բայերով արտայայտուած...

5. Երկրորդ պարբերութեան սկիզբը, ո՞ր բառը կ'ըսէ Որսորդին զգացածը: Բայց միւս կողմէն, ի՞նչ կ'արտայայտեն նոյն այդ պարբերութեան վերջին տողերը:

6. >> Մասի վերջին տողը ի՞նչ կը բերէ. ներկայ,



Աշակերտներ՝ հրդեհի գոհ  
անտառի մեջ:

Վարի անկիւն  
Վերածնունդի յոյս - եւ  
անհրաժեշտ խնամք...

Մինակ՝ կայնաժ է լերան վրայ. հովերը մազերը կ'ա-  
լեկոծեն, ու բոսիկ ոտքերէն ա՛լ արիւն կը մզի<sup>14</sup>: Յուսա-  
հատ կանգնած հոն՝ կը սպասէ մէկուն, որ պիտի գայ,  
մինչ առջեւէն մարախներ կը ցատկեն խումբով ու  
թեթեւ թետերով վար կը խուժեն. անոնց իջնելը կը դիտէ  
տխուր աչքերով, մինչ թրթռալով կը կորսուին. մերթ<sup>15</sup>  
բզէզ մը, միօրինակ բզզիւնով, խոր լռութիւնը կը խզէ,  
ապա կը թռի՛ կ'երթայ:

6. Կեցաւ Ռրսորդը հոն, լերան գլուխը, աչքերը անըս-  
պառ յոյսով ուղղած վար, լեռներէն վար, սպասելով  
մէկուն, որ պիտի գար: Մա՛հը եկաւ, ու աչքերը կոպիճ-  
ներուն<sup>16</sup> մէջ, գլուխն ալ ուսին գամեց:

Ու լեռը հիմա իր երգն ունի.- Վա՛յ անոր, որ Այծեա-  
մին նշան կը բռնէ:

իրական դէպքի մը  
մթնոլո՞րտը կը թելադրէ,  
թե՞...

### ԲԱՅԱՏՐԵԼԷ ԵՏՔ

- Հատուածը իբր աղբիւր  
ունի ժողովրդական  
հեքիաթ մը: Հալածուած  
ժողովուրդի մը մօտ՝ ի՞նչ  
դեր կրնայ կատարել իր  
երեւակայութենէն ծնած  
այսպիսի հեքիաթ մը:  
Անիկա ինչո՞վ կրնայ  
օգտակար ըլլալ իրեն,  
եւ ինչո՞վ... վնասակար,  
տկարացնող:

1. Այծեան եւ Ռրսորդ գլխագիր կը սկսին. խորհրդանշաններ են:
2. Դարվար.- Չառիվար:
3. Նետերու աման, տուփ (*կապարճ, նեկո* դրուած են՝ հեքիաթի մթնոլորտ ստեղծելու համար):
4. Մաստառ.- Ծոփքի լեռներէն, Խարբերդի արեւելքը:
5. Անճաւ.- Քարայր:
6. Դալարի(ք).- Խոտածածկ տարածք:

- 7. Թխսել.- Թուխսով ծնունդ տալ (թռչունի համար): Հոս` գործածուած փոխաբերաբար:
- 8. Տայտք.- Հեղուկի ժայթքած կամ հոսած-թափած կաթիլ:
- 9. Հանգիստ սեւեռում ունենալ .- Հանգիստ դիտել:
- 10. Չարհուրանքը չափել.- Մարսափը լրիւ զգալ:
- 11. Բքալ.- Կանչել (եղնիկի համար):
- 12. Սգիլ.- Սեղմ հոսիլ:
- 13. Գիւսհար.- Խելագար:
- 14. Կոպիճ.- Աչքին փոսը:
- 15 Մերթ.- Երբեմն:



## ԼՍԱ-ՏԵՍՈՂԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

- Դիտեցէք նախորդ էջի լուսանկարները: Կրկին կարդացէք էջ 6ի Բնաբան-գրութիւնը, եւ դասարանային զրոյցով քննեցէք հարցը.- Ի՞նչ ազդակներ բնութիւնը կ'ապականեն, կը քանդեն: Փնտռեցէք նաեւ բնութեան պահպանման ձեւեր (դպրոցական պտոյտ մը կրնայ դառնալ բնութեան ճանաչումին նուիրուած արշաւ):

- Դաւաքեցէք լուսանկարներ. լուսանկարեցէք նաեւ դուք: Կրնաք կազմել-պատկերագարդել դասարանային «Պատի թերթ» մը:

## Ռուբէն Չարդարեան, 1874-1915



*Ծնած է Հայաստան, Ծովքի շրջանին մէջ, Խարբերդի մօտ: Կ'աշակերտէ ծանօթ գրագէտ-ուսուցիչ Թլկատինցիի: Իր կարգին կ'ըլլայ ուսուցիչ` նոյն գաւառին մէջ:*

*Յեղափոխական դարձած` կը բանտարկուի. յետոյ կը փախչի, կ'անցնի Պուլկարիա, ուր կը հիմնէ եւ կը խմբագրէ թերթ մը:*

*1908ի Սահմանադրութեան ճանչցուած գրագէտ է. Պոլիս դարձած` կը խմբագրէ «Ազատամարտ» թերթը: Կը հրատարակէ «Ցայգալոյս» գործը:*

*Լահատակուած է 1915ին:*

*Չարդարեանի մօտ երբեմն զգալի է ժողովրդական, իրապաշտ շեշտը: Բայց աւելի իշխող են` բանաստեղծական շունչն ու թռիչքը:*

## Լեզուական-Գործնական Աշխատանք

### Շարադրութիւն



Ամէն երկրի մէջ, բնական միջավայրի պահպանման փորձերու կարգին, կը պատահին մահաւորութիւն, աւերումի կարեւոր պարագաներ:

Լաւ դիտել էտք էջ 6ի եւ էջ 19ի նկարները, տեղեկագրէ՝ այդպիսի պարագայ մը, որ ներկայացած է քու բնակութեան վայրիդ մօտ: Թուելով հետեւելիք բազմապիսի վնասները, խորհրդածէ՝ ներկայ թէ ապագայ վտանգներուն մասին: Առաջարկէ՝ կանխումի եւ դարմանումի միջոցներ:

Գրածդ կրնայ ըլլալ լրագրական խոյզ. կրնայ պահել գրական էջի յատկանիշներ:



# ԱԼՊԵԱՆՆԵՐՆ Ի ՎԵՐ



Ահա մէկը՝ Գրիգոր Զօհրապի քրոնիկներէն, մամուլի մէջ երեւցած այդ հետաքրքրական, արժէքաւոր «ակնարկ»ներէն, որոնք կը ցոլացնեն իր առօրեայ միջավայրը, ճամբորդութիւններու տպաւորութիւնները եւն.:

Ալպեան լեռներու վայրի բնութեան առջեւ, Զօհրապ կը մտածէ մարդու յանդգնութեան մասին, բնական միջավայրի դժուարութիւնները յաղթահարելու մղումին մասին: Հերոսութեան այս տեսակը ան կը կապէ նոր ժամանակներուն՝ 19րդ դարէն 20րդ անցումին մօտ (էջը գրուած է 1900ի շուրջ):

Զօհրապ կը հաւատայ, որ մարտունակ նկարագիրի տէր որոշ մարդիկ ուղղակի կը սիրեն դիմագրաւել անսովոր, դժուար կացութիւններ. պայքար մղել բնութեան դէմ ու զայն նուաճել՝ երբեմն նոյնիսկ իրենց կեանքին գնով: Ան արագ գիծերով կը ներկայացնէ այս հոգեբանութիւնը՝ միաժամանակ արտայայտելով իր հիացումը:

Այս քրոնիկներուն ոճը չոր-մտածողական չէ: Կը նկատենք, որ լեռնային բնութիւնը արթնցուցած է նկարիչի իր «աչքը», իսկ մարդկային հերոսութիւնը՝ ջերմացուցած, խանդավառած է իր մէջ բանաստեղծի զգայնութիւնը:

1. Սալցպուրկէն դէպի հարաւ, կեդրոնական Եւրոպայի դաշտերու կանաչ անասհման թափշին դէմ, հեռուն՝ հորիզոնին վրայ, վիթխարի, անմռունչ<sup>1</sup> զանգուած մը կը կանգնի, երկինքի վճիտ կապոյտին մէջ խրելով իր ձիւնասպիտակ սարերուն ելեւէջը, տեղ-տեղ զայն պարուրելով ամպեղէն շղարշի<sup>2</sup> մէջ:

Այդ ծուռումուռ գիծը, կարծես՝ առասպելական տինոսօրի<sup>3</sup> մը հսկայ բերանին վարի առամնաշարը, անվերջ կ'երկարի՝ երկինքը խածնելով: Ալպեան լեռնաշարքին առաջին հանգոյցներն են. Թիրոլը, Բարձր Սալվուան, Չուիցերիան՝ էտրլվայսներու<sup>4</sup> աշխարհը...

2. Տափակութիւններու սիրահարները թող չգան հոս, տարօրինակ այս երկիրը՝ ուր քալել չկայ, մազլիկ կայ. կանգ առնել չկայ, բարձրանալ կամ իյնալ կայ: Մեր դարու նշանաբանն<sup>5</sup> ու ճակատագիրը. վե՛ր, աւելի՛

1ա. Գտի՛ր ա. մասի վայրերը քարտէսի մը վրայ՝ Չուիցերիոյ, Աւստրիոյ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի միջեւ:

1բ. Ալպեանները ինչի՞ կը նմանցուին (բացատրէ՛ գծագրութեամբ մը): Համեմատութիւնը ինչո՞ւ յաջող է. աչքի տեսածէն անդին՝ ի՞նչ կը զգացնէ:

2. Տափակութիւններու սիրահարները թող չգան հոս... Տափակութիւն բառը ի՞նչ իմաստով

վեր. գերագոյն ճիգ՝ որմէ քայլ մը անդին մահը կը սպասէ...

Տեսէ՞ք երկրախոյզները, լեռնախոյզները, բեւեռախոյզները<sup>6</sup>. մեր առջեւ նոր աշխարհ բացողները, որոնցմէ շատեր իրենց առաքելութենէն չեն վերադարձած: Տեսէ՞ք ծովերուն վրայ եւ ծովերուն տակ պտտող եւ աներեւութացող նաւագները, օդին մէջ ճախրող<sup>7</sup> եւ յանկարծ գահավիժող կտրիճները, որոնք անդարձ գացին՝ հողի տիրապետութեան ատելցնելով ծովի եւ օդի տիրապետութիւնը...

### 3. Ես ալ կատարեցի Ալպեաններուն վերելքը...

Մի՛ ծիծաղիք. ի՞նչ կ'ուզէք որ ընէի այս բարձր Սաւուային մէջ: Դժնդակ, անհնարին<sup>8</sup> վերելքը կատարեցի յաջողութեամբ. անդունդներու եզերքներէն կախուած՝ հասայ մինչեւ անմատչելի բարձրութիւններ. հասայ մինչեւ Սառոյցի Ծովը<sup>9</sup>, որ երկու կողմէն կանգնող լեռներու ծոցը կը լեցնէ իր կապոյտ-ճերմակ, մերկ միսովը. մարմին մը՝ գծագրուած անհամար ջիղերով, երակներով, որոնք կնիքն են լեռնագնացներու գարշապարներուն<sup>10</sup>:

Իմ վերելքս, հարկաւ, կատարուեցաւ հանգիստի եւ ապահովութեան բոլոր փափաքելի պայմաններուն մէջ. ճոպանուղիի<sup>11</sup> առկախ խցիկի կարմիր թախշ նստարանին վրայ առօք-փառօք տեղաւորուած, վայելելով հիացական աչքիս առջեւ հետզհետէ պարզուող կանանչ հովիտը, երկու կողմէն բարձրացող հսկայ լեռներով, որոնք նոճիի անտառներուն դողդղացող շուքը կը ձգեն իր վրայ:

4. Ուրեմն վերելքիս համար ոչ որ միտքէն կ'անցնէ արձան մը կանգնեցնել ինձի, ինչպէս կանգնեցուցած են Շամոնիի մէջ արձանը անոր, որ առաջին անգամ Մոն-Պլանի կատարը բարձրացաւ: Անոր՝ որ սրածայր երկաթէ ցուպը ձեռքին, ամէն քայլափոխի սայթաքելով, ամէն շարժումի կեանքը վտանգելով, մինակ՝ սլացաւ մերկ լանջերէն վեր, լրիւ գուրկ՝ իմ ունեցած միջոցներէս: Եւ ոչ որ կրնայ իր տաժանքին<sup>12</sup> փառքը խլել իրմէ:

գործածուած է. միայն տափակ երկիրի՞... (տես՝ սեփական տողերը):

3. Առաջին տողն ու հետեւող պարբերութիւնը ինչո՞ւ կը զարմացնեն: Իսկ մասի վերջին պարբերութիւնը ի՞նչ երեւան կը հանէ: Բացատրէ՛ կատակը:

4. Այս մասին մէջ, գրագէտը կը լրջանա՞յ. որո՞ւն մասին խօսած ատեն: Ի՞նչ է իր զգացումը անոր հանդէպ. ո՞ր բառերով ըսուած է:





**Նեփալցի լեռնագնաց՝  
դէպի  
Յիմալայայի գագաթները**

«... եւ ոչ ոք կրնայ իր տաժանքին փառքը  
խլել իրմէ:»

5. Մինչեւ որ Ալպեաններու վերելքը աժանցաւ եւ ապահովուեցաւ, քանի՛ կեանքեր գոհուեցան: Այս Սառոյցի Ծովը, որուն վերեւ կանգնած են, քանի՛ արկածախնդիր ուղեւորներ կու տուած է՝ միւս հեղուկ ծովին պէս:

Որքան կը նայիմ անոր անմեղունակ, ցուրտ երեսին, այնքան կը զարհուրիմ<sup>13</sup> իրմէ: Դալարագեղ ու ստուերոտ գերեզմանոցը չէ, այլ սպիտակ եւ միապաղաղ Կայանը: Ծերմակ սուգն է ան:

Վէպէ մը՝ կը յիշեմ Պրոքսանի մէկ ծովահայեաց<sup>14</sup> գերեզմանատան նկարագրութիւնը. գերեզմաններ՝ որոնց տակ չեն հանգչիր մարմիններ, որովհետեւ ծովերուն յատակը պառկած են. միայն համեստ փայտէ խաչեր, որոնց վրայ անուն մը եւ սա պարզ գրութիւնը. «Ծովին մէջ կորսուած»:

Սառոյցի Ծովն ալ, այս պահուս, այդպէս անթիւ խաչերու անտառով մը ծածկուած կը թուի աչքիս. «Սառոյցին մէջ մահացած»:

Մահացած, թէ՞ անմահացած. ա՛լ դուք որոշեցէք...

5. Գրագետը ինչի՞ կը համեմատէ Սառոյցի Ծովը. ինչի՞ մէջ կը գտնէ նմանութիւնը, եւ գիրքերէ եկող ի՞նչ յիշատակով կը զարգացնէ, կը հարստացնէ զայն:

**ԲԱՅԱՏԻԼԷ ԵՏՔ**

- Ինչպիսի՞ անձեր են *տրտիկապիտան չսիրողները*: Ինչո՞վ կը զանազանուին իրենց սովորական միջավայրէն: Ընթերցումներէդ մեկնելով՝ ներկայացուր անձ մը, որ իր «տարբերութիւնը» ցոյց տուած է բոլորովին ուրիշ մարզի մը մէջ:

- 1. Անմռունչ.- Լուռ, անձայն:
- 2. Շղարշ.- Քող, ծածկոց:
- 3. Տինասօր.- Նախնադարեան հսկայ մողես. հոյամողես: 4. Էտրվայս.- Չինձաղիկ (գերմաներէն):
- 5. Նշանաբան.- Գործի սկզբունք մը խտացնող բառ կամ նախադասութիւն:
- 6. Բեւեռախոյզ.- Երկրի բեւեռները հետախուզող ճամբորդ: 7. Ճախրել.- Սլանալով թռչիլ:
- 8. Դժնդակ, անհնարին.- Անկարելի չափ դժուար, յոգնեցնող:
- 9. Սառոյցի Ծով.- Նշանաւոր սառնակոյտ՝ Ալպեաններու մէջ:



- 10. Գարշապար.- Ուոքի տակ, կրունկ:
- 11. Ճոպանուղի.- Մետաղեայ պարանճեկ կախուած փոխադրամիջոց, խցիկով կամ բաց աթոռով:
- 12. Տաժանք.- Մեծ ճիգ, յոգնութիւն: 13. Չարհուրիլ.- Սարսափիլ:
- 14. Ծովահայեաց.- Ծովը դիտող, ծովի դէմ եղող:

**Գրիգոր Զօհրապ  
1861-1915**



*Ծնած է Պոլիս: Հետեւած է իրաւաբանութեան ու դարձած՝ նշանաւոր փաստաբան:*

*Աշխատակցած է պոլսահայ թերթերու՝ պատմութեանը ու քրոնիկներով, որոնք արժէքաւոր գրական էջեր են: Փորձած է նաեւ բանաստեղծութիւն եւ վէպ, բայց իր գլուխ-գործոցները իր պատմութեանը են:*

*Զօհրապի պատմութեանը խմբուած են երեք հատորներով՝ «Խղճմտանքի Ձայներ», «Լուռ Ցաւեր», «Կեանքը ինչպէս որ է»: Անոնց մէջ կ'երեւի՝ իբր խորաթափանց հոգեբան եւ նրբաճաշակ արուեստագետ:*

*Զօհրապ նաեւ խաղացած է գործօն դեր՝ ազգային-հանրային ժողովներու մէջ: Իսկ 1908ին՝ եղած է Օսմանեան խորհրդարանի ամենափայլուն դէմքը եւ պետական համալսարանի նշանաւոր դասախօս:*

*Զոհ ցեղասպանութեան՝ 1915ին:*



**ԼՍԱ-ՏԵՍՈՂԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ**

Մարդը՝ աշխարհի բարձր գագաթներուն վրայ.- Փնտռեցէք լեռնագնացներու արկածները՝ գիրքերէ, թերթերէ: Արձանագրեցէք անուն, թուական եւ այլ տեղեկութիւններ, հաւաքեցէք նկարներ: Կ'ունենաք նիւթ՝ ամբողջ «Պատի թերթ»ի մը համար:

Նոյն նպատակով, գտէք պատումներ՝ նաեւ Արարատ բարձրացումի - ներկայի յաճախակի փորձերէն (տես մամուլ), կամ անցեալէն (ինչպէս օրինակ՝ Խ. Աբովեանի բարձրացումը):



**Լեզուական-Գործնական Աշխատանք**

**1. Շարժումի կապուած հինգ բայեր. գործածէ՛ ըստ յարմարութեան.-  
օ խրիլ օ մագլցիլ օ գահավիժիլ օ սլանալ օ սայթաքիլ**

- ա. Այսօրուան գնացքները կրնան ժամական մինչեւ 300 քիլոմէթր .....
- բ. Երբեմն, բարձունքներէն ժայռի զանգուած մը ձոր կը .....
- գ. Բարձր լեռ մը .....ը ուժեղ մարմին եւ յատուկ գործիքներ կը պահանջէ:

դ. Ծերունին ..... , բայց գաւազանին կոթնելով ոտքի մնաց:  
ե. Սրածայր ձողը ..... կոճղին մէջ, եւ հոն ալ մնաց:

**2. Գտի՛ր եւ գրէ՛ ի՛նչ պատկերով կամ դարձուածքով կ'ըսուի դասին մէջ.-**

- o *Մաս 1.-* Գազաթները շարուած են, ցցուած՝ երկինքին մէջ:  
.....
- o *Մաս 1.-* Լեռնաշղթային առաջին խմբուած գազաթները...  
.....
- o *Մաս 2.-* Ծիգ մը, որ չափազանց վտանգաւոր է...  
.....
- o *Մաս 3.-* Ուրիշ ոչինչ կրնայի ընել...  
.....
- o *Մաս 3.-* Չիւնոտ մակերես, որ ծածկուած է լեռնագնացներու ոտնահետքերով:  
.....

**3. Հետեւելով ամէն օրինակ-նախադասութեան եւ ուշադրութիւն ընելով իմաստին, լրացո՛ւր վարի կէս նախադասութիւնները եւ կազմէ՛ նորեր.-**

**ա. Իմաստը՝ Գծուար արդիւնքի մը համար եղած աշխատանք.**

**Օրինակ՝** Մինչեւ այս լերան վերելքը ապահովուեցաւ, քանի՛ կեանքեր զոհուեցան:

- Մինչեւ (որ) այս էջը լրացուցի, ..... :
- Որպէսզի յաջողիս վերջին քննութեանդ, ..... :
- Մինչեւ (որ) ..... :
- Որպէսզի ..... :

**բ. Իմաստը՝ Պատճառ-բայ եւ հետեւանք՝ մէկը միւսին համեմատական աճող.**

**Օրինակ՝** Որքան կը նայիմ իր երեսին, այնքան կը սարսափիմ իրմէ:

- Որքան քալեցիմք այդ բլուրներուն վրայ, այնքան ..... :
- Քանի՛ յանդիմանուեցաւ, այնքան աւելի ..... :
- ..... :
- ..... :

**4. Շարադրութիւն**

**Ա. Նիւթ.-** Կը մասնակցիս լեռնագնացութեան արշաւի մը: Տո՛ւր տեսածդ ու զգացածդ վերելքի ատեն, կամ անոր մէկ պահուն: Եղի՛ր զուսպ եւ անձնական:

**Բ. Նիւթ.-** Գ. Չօհրապի ներշնչումով, ներկայացո՛ւր պատկեր մը՝ անջրպետի նուաճումէն (արուեստական արբանեակի թռիչք, արշաւ Լուսինի վրայ եւայլն):



# ԵՐԿՐԱԳՈՒՆԴԻ ՓՈՐԻՆ ՄԷՉ...

Ժիւլ Վերնի անունը մեզի ծանօթ է՝ մեր դասագիրքերէն: Անոր գրեթէ բոլոր վէպերը կառուցուած են նոյն ընդհանուր թեմային շուրջ.- Խումբ մը մարդիկ կը նուաճեն հեռաւոր, վտանգաւոր միջավայր մը՝ շնորհիւ իրենց խիզախութեան եւ գիտական հմտութեան:

Չոս, «Ճամբորդութիւն դէպի Երկրի Կեդրոնը» գիրքի մէկ հատուածին մէջ, փրոֆեսոր Լիթենպրոքը իր եղբօրորդի Աքսէլը հետը բերած է Իսլանտա, ուր՝ տեղացի Յանսին առաջնորդութեամբ՝ մտած են հրաբուխի մը խորը: Նպատակ՝ հասնիլ Երկրի կեդրոնը, որ հալած միւթերու դժոխք մը չէ - ըստ փրոֆեսորին...

Մեր ճամբորդները՝ օրեր ամբողջ՝ պարաններով իջած են անյատակ անդունդի մը խորը. քանի մը օր մնացած են առանց ջուրի, բայց ի վերջոյ գտած են առու մը, որ գետնուղիին մէջ հոսելով՝ թէ՛ ըմպելի ջուր կու տայ, եւ թէ՛ -կարծես- գիրենք կը տանի դէպի իրենց նպատակը: Կարելի է ըսել, որ «դէպի Երկրի Կեդրոնը» ճամբորդութիւնը լաւ ընթացքի մէջ է: Անշուշտ եթէ նոր փորձանքներ չպատահին...

Ժ. Վերնի այս գործը լաւ օրինակ մըն է գիտա-երեւակայական վէպի, ուր յաճախ գիտական փաստեր կու գան լրացնելու արկածախնդրական նիւթ մը:

1. Այդ օրը, գետնուղին<sup>1</sup> կ'իջներ անզգալի զառիվարով: Հօրեղբայրս շալկած էր մեծ ելեկտրալամբերէն մէկը, ես՝ միւսը: Կը քալէի առջեւէն, հոսող առուակին քովն ի վար, գոհ՝ որ ա՛լ անդունդի մը վրայ չէինք ճօճեր՝ պարանէ կախուած, ոչ ալ կը տառապէինք ծարաւ: Կը դիտէի կրանիթէ<sup>2</sup> խաւերը: Յանկարծ շուրջս նայելով տեսայ, որ մինակ եմ:

«Խնդիր չէ,- ըսի բարձրաձայն.- կ'երեւի շատ արագ քալեցի, կամ Հանսը եւ հօրեղբայրս կանգ առին: Պէտք է գտնել գիրենք»:

Եւ ետ դառնալով՝ քառորդ ժամ մը քալեցի, շուրջս նայելով. ոչ ոք կար: Սկսայ կանչել, ոչ մէկ պատասխան: Սկսայ վախնալ. սարսուռ մը անցաւ մարմինէս:

- Պէտք է հանդարտ մնալ,- ըսի՝ ես ինձի խօսելով.- վստահ՝ պիտի գտնեմ գիրենք: Չէ՞ որ միայն մէկ ճամբայ կայ: Քանի առջեւէն կը քալէի՝ ուրեմն պէտք է շարունակ ետ երթամ:

1. Աքսէլը քանի մը անգամ բարձրաձայն կը խօսի ինքնիրեն: Ինչպէ՞ս կը բացատրես իր այս վարմունքը:

Կէս ժամ քալեցի՝ ականջ դնելով. չէի՞ն կանչեր զիս: Այսպիսի խիտ մթնոլորտի մէջ՝ անոնց ձայնը հեռուէն ալ պիտի լսէի: Բայց մեռելային լռութիւն կը տիրէր գետնուղիին մէջ: Կանգ առի:

Չէի ուզեր հաւատալ, թէ բոլորովին մինակ եմ: Անընդհատ ես ինծի կը կրկնէի. «Եթէ մէկ ճամբայ կայ եւ ես առջեւէն կը քալէի՝ պէտք է միշտ ետ երթամ. թերեւս իրենք ալ զիս փնտռելու համար սխալմամբ ետ դարձած են: Եթէ աճապարեմ՝ կը հասնիմ իրենց»:

2. Բայց ի վերջոյ՝ կասկածը տիրեց ինծի: Իսկապէ՞ս առջեւէն կ'երթայի ես: Հօրեղբայրս, լաւ կը յիշէի, վայրկեան մը կանգ առաւ իր բեռին կապերը ամրացնելու համար. այդ վայրկեանին էր որ ես առաջ անցայ:

«Ամէն պարագայի,- մտածեցի,- չմոլորելու շատ ապահով միջոց մը ունիմ. ասիկա հաւատարիմ առուն է, որ զիս պիտի առաջնորդէ...: Բարձրանա՛մ անոր հոսանքն ի վեր, եւ կը գտնեմ ուղեկիցներս<sup>3</sup>»:

Ճիշդ այդ մտածումին վրայ՝ անդրադարձայ ահաւոր բանի մը. արագ ծռեցայ գետին, եւ դէմս տեսայ չոր կրանիթը. առուն ա՛լ չէր հոսեր ոտքերուս տակ:

3. Աննկարագրելի յուսահատութիւն մը պատեց զիս: Ոչ մէկ մարդկային լեզու կրնայ ըսել այդ պահուն զգացածս: Ողջ-ողջ թաղուած էի. ինծի կը սպառնար մահը՝ անօրութեան ու ծարաւի տանջանքներուն մէջ:

Բայց ինչպէ՞ս հեռացեր էի ջուրի հոսանքէն: Միայն հիմա կը հասկնայի շուրջիս տարօրինակ լռութիւնը: Պարզ էր, ճամբան բաժնուեր էր առջեւս. ես՝ անուշադիր, հետեւեր էի այս ուղղութեան, իսկ ընկերներս առուին հետ գացեր էին դէպի անյայտ խորութիւններ:

Ինչպէ՞ս վերադառնայ: Ոտքը հետք չի ձգեր կարծր կրանիթին վրայ: Կացութիւնս կ'արտայայտուէր միակ բառով մը. կորսուած: Կորսուած անյատակ անդունդի մը խորը, երեսուն մղոն Երկրագունդի կեղեւի ահռելի զանգուածին տակ:

Ջախջախուած էի:

- Ա՛հ, հօրեղբա՛յր, հօրեղբա՛յր,- կը կանչէի յուսահատ շեշտով:

2. Հոս ի՞նչն է որ Աքսելին մտահոգութիւնը պիտի վերածէ սարսափի: Ինչո՞ւ. բացատրէ՛:

3ա. Նշէ՛ բառերը, որոնցմով Աքսելը կ'արտայայտէ իր սարսափելի վիճակը:

3բ. Բացատրէ՛ Աքսելի այս կանչը՝ իր հօրեղբոր ուղղուած: Բայց ինչո՞ւ երկար չեն տեսեր իր մէջ՝ «մեղադրական» տրամադրութիւնները:



Այս եղաւ շրթունքէս դուրս թռած միակ մեղադրական խօսքը. անդրադարձայ, թէ խեղճ մարդը ի՛նք որքան կը տանջուէր այդ պահուն - զիս փնտռելով:

4. Հսկայ ճիգով՝ քիչ մը կեդրոնացուցի հոգեկան ուժերս, ու կրցայ մտածել վիճակիս մասին: Երեք օրուան սնունդ ունէի եւ ջրամանս լեցուն էր: Աւելի երկար չէի կրնար գոյութիւնս պահպանել:

Բայց դէպի ո՞ւր երթալ. բարձրանա՞լ, թէ՞ իջնել: Բարձրանա՞լ, անշուշտ՝ մի՛շտ բարձրանալ: Այդպէս՝ պիտի հասնէի չարաբաստիկ<sup>4</sup> կէտին, ուր բաժնուած էի առուէն:

Նախ եւ առաջ՝ պէտք էր գտնել առուն. այդ էր փրկութեան յոյսը:

Ոտքի ելայ ու գաւազանիս կռօնած՝ սկսայ բարձրանալ գետնուղիին մէջէն: Չառիվերը բաւական թեք<sup>5</sup> էր: Կը քալէի յուսալի եւ առանց տատանումի<sup>6</sup>. մարդու մը պէս, որ ուրիշ ընելիք չունի:

Կէս ժամուան ընթացքին ոչ մէկ արգելքի հանդիպեցայ: Կը փորձէի ճանչնալ ճամբան՝ գետնուղիին ձեւէն, դարձուածքներէն ու ցցուածքներէն: Բայց ոչ մէկ որոշ նշան զարկաւ աչքիս, ու շուտով հասկցայ, որ ուղին ելք չունէր: Չարնուեցայ զայն փակող պատին եւ ինկայ կրանիթ յատակին վրայ:

5. Քանի՞ ժամ պառկած մնացի հոն, կէս-մարած վիճակով, դէմքս արցունքներով ու արիւնով ողողուած՝ չեմ կրնար ըսել: Միայն գիտեմ, որ կամաց-կամաց սթափեցայ՝ հեռաւոր, կրկնուող որոտումէ մը:

Թանձր խաւարի մէջ թաղուած էի, որովհետեւ ելել-տրալամբս հետս գետին ինկած՝ փշրուած էր: Նստայ տեղս, յետոյ ելայ ոտքի, ու քանի մը քայլ ըրի՝ խարխափելով<sup>7</sup> մութին մէջ: Հասայ ժայռէ պատին, ականջս կայցուցի ու սպասեցի:

4ա. Կորսուած երկրախոյզը իր հոգեկան ուժերը կը կեդրոնացնէ՝ ի՞նչ ընելու համար:

4բ. Այս ճիգը ինչո՞ւ ապարդիւն պիտի ըլլայ:



Որոտումը անգամ մըն ալ լսուեցաւ, աւելի ուժեղ: Հետեւեցաւ՝ շա՛տ հեռու ու տկար՝ խօսակցութեան ձայն մը, կարծես ժայռին մէջէն փոխանցուած:

Կայծակի արագութեամբ՝ միտք մը անցաւ մէջէս. հօրեղբայրս չէ՞ր փորձեր հրացանի հարուածով հաղորդակցիլ հետս...

Բերանս մօտեցուցի ժայռին.

- Հօրեղբա՛յր Լիթենայրոք...

Սպասեցի սրտատրոփ. երկվայրկեանները կը սահէին: Յուսահատելու մօտ էի, երբ հասաւ ձայն մը.

- Աքսէ՛լ, տղա՛ս. կը լսե՞ս զիս...

Այս անգամ՝ յոյսի արցունքներէն խեղդուեցայ. մեր ձայները զոնէ կը հասնէին ահա իրարու:

Քիչ ետք, հօրեղբայրս, ըստ մեր ձայներու երթելէկի տեսողութեան, չափած էր մեր մօտաւոր հեռաւորութիւնը իրարմէ - մէկուկէս մղոն: Ապա մանաւանդ՝ ան ինձի բացատրած էր, թէ իրենց հասնելու համար, ոչ թէ բարձրանալ պէտք էր, այլ՝ իջնել...

Կրկին յուսալի՛ ճամբայ ինկայ: Ամուր քայլերով՝ ըսկըսայ առաջանալ զառիվարին վրայ, որ երթալով աւելի թեք կ'ըլլար: Այլեւս չէի կրնար կանգ առնել:

Ի վերջոյ, ընթացքս վերածուեցաւ թաւալգոր անկումի. անգամ մը ես՝ զիտակցութիւնս կորսնցուցի...

6. Երբ նորէն զիտակցութեան եկայ, ինքզինքս գտայ պառկած՝ կիսախաւարին մէջ, հաստ ծածկոցներու մէջ փաթթուած: Հօրեղբայրս, որ քովս էր, ձեռքս սեղմեց ուրախութեան ճիչով մը:

- Ո՛ղջ է, ո՛ղջ է: Սիրելի՛ տղաս, փրկուեցա՛ր:

Յուզուեցայ. այսքան ծանր փորձանք մը պէտք էր՝ խիստ հօրեղբայրս գուրգուրոտ դարձնելու համար:

Շուրջս նայեցայ: Անկողինս կը գտնուէր հսկայ քարայրի մը մէջ, որուն պատերը ծածկուած էին հրաշալի շթաքարերով: Յատակը մանր, մաքուր աւազ էր: Մուտքին նեղ անցքէն ներս կը սահէր անբացատրելի լոյս մը: Կը լսուէր թեթեւ շշուկ մը, ալիքներու ծփանքի նման, եւ երբեմն ալ կը հասնէր հովի սուլոց մը:

Կէս մը երազի՞ մէջ էի: Կամ ուղե՞ղս խանգարուած էր անկումէն:

Տա. Բացատրէ՛, թէ ինչնօ՛ւ «մեր չայները զոնէ կը հասնէին իրարու» հաստատումը միայն զգացական քաջալերանք չէ, այլ՝ տրամաբանական յոյս մը:

Տբ. Իսկ զիտակցական հօրեղբօր ո՞ր թելադրանքը այդ փրկութեան յոյսը պիտի ամրապնդէ:

6. Բացատրէ՛ Աքսէլի զգացած մտահոգութիւնը, երբ կ'արթննայ:

Հօրեղբայրս պատմեց ամէն բան: Իրենց անյոյս փնտռտուքը, կանչելը, հրացանի բազմաթիւ հարուածները, որոնցմէ վերջինները արթնցուցած էին զիս... Ապա՝ բախտով փրկուիլս ստոյգ<sup>8</sup> մահէ, երբ թաւալզլոր անկումս վերջացած էր ուղղակի իր թեւերուն մէջ, գետնուղիին ծայրը, ուր կը սպասէր:

7. - Բայց հօրեղբայր...,- ըսի,- վախնամ՝ ուղեղս անկումէն խանգարուած է. կը տեսնեմ ճերմակ լոյս մը, եւ կը լսեմ ալիքներու աղմուկ ու հովի սուլոց...

- Եթէ միայն այդքանն է՝ հոգ մի՛ ըներ, տղաս...:

- Չե՞ս բացատրեր...

- Ոչ, Աքսել... որովհետեւ անբացատրելի է: Վաղը դուրս կ'ելլես, աչքերովդ կը տեսնես, եւ կը համոզուիս, որ գիտութիւնը իր վերջին խօսքը չէ ըսած դեռ...:

- Հի՛մա ելլենք,- գոչեցի՝ շտկուելով անկողինիս վրայ:

- Ո՛չ, գով օդը կը վնասէ քեզի: Քիչ մը համբերէ՛, տղաս:

Այսօր հանգի՛ստ ըրէ. վաղը արդէն պիտի նաւարկենք:

- Պիտի նաւարկե՞նք...

Չով օ՞ղ... նաւարկե՞լ...: Ապշեցայ: Մեր առջեւ գետ, լիճ կամ ծո՞վ կար. նա՞ր մը խարիսխ նետած էր նաւահանգիստի մը մէջ...

Հետաքրքրութիւնս ծայր աստիճան գրգռուած էր: Հօրեղբայրս տեսաւ, որ անհամբերութիւնս կրնայ աւելի վնասել ինձի, ու տեղի տուաւ<sup>9</sup>: Հագուեցայ, փաթթուեցայ ծածկոցի մը մէջ եւ իր թեւին կռթնած՝ միասին ուղղուեցանք դէպի ելքը:

8. Սկիզբը բան չէի տեսներ. աչքերս անվարժ ըլլալով լոյսին՝ իսկոյն գոցուեցան: Երբ կրցայ բանալ զանոնք, շշմած մնացի:

Ջուրի ընդարձակ տարածութիւն մը փռուած էր մեր առջեւ՝ մինչեւ հորիզոն: Ծովափը ծածկուած էր բարակ աւազով եւ խեցիներով: Ալիքները ափը կը հարուածէին արձագանգող շառաչով, ու մեղմ հովը կը թոցներ փրփուրը, կաթիլներ հասցնելով երեսիս: Հարթ ափին վրայ, տեղ-տեղ ցցուած էին հսկայ ժայռեր, երբեմն՝ անչափելի բարձրութեամբ: Անոնք կ'երթային մինչեւ անյայտ հեռուները. ոմանք կը ցցուէին հորիզոնի մշուշապատ խորքին վրայ:

7. Հոս՝ արթնցողին մտահոգութիւնը կը վերածուի զարմանքի. նշէ՛ այդ զգացումները արտայայտող բառերը:

8. Այս մասի ո՞ր մանրամասնութիւններուն մէջ կը գտնենք՝ ամենէն աւելի՝ Ժիլ Վերնի երեակայութեան ուժը: Ան ի՞նչ գիտական բացատրութիւններ կը ճարէ զանոնք հիմնաւորելու համար. նշէ՛ մէկ-երկու օրինակ:

Մեր առջեւ իսկական ովկիանոս մըն էր կարծես, շրջապատուած՝ վայրի ժայռերով:

Նայուածքս շատ հեռուները կը թափանցէր, որովհետեւ տեսարանը մինչեւ յետին մանրամասնութիւնը լուսաւորուած էր՝ մասնայատուկ լոյսով մը: Արեւին լոյսը չէր առիկա՝ մէկ կէտէ մեկնող փայլուն ճառագայթներու խորձով<sup>10</sup> եւ շուքերու խաղով: Անոր համատարած սփռումը<sup>11</sup> եւ ցած ջերմաստիճանը բացայայտ կը դարձնէին իր ելեկտրական բնոյթը:

Բնական այս ելեկտրականութեան ալիքները զարմանալի խաղեր կ'առաջացնէին «երկինքին»՝ հսկայ քարայրին անչափելի բարձունքներուն մէջ, ուր խոշոր ամպեր կը լողային: Իրենց ցրտութեամբ՝ անոնք կը ձգէին մեկամաղձոտ տպաւորութիւն մը: Ձգալի էր, որ երկինքի փոխարէն՝ այդ ամպերուն վերեւէն կը ճնշէր կրանիթէ բարձր, շատ բարձր առաստաղ մը...:

9. - Ծո՛վը...,- կրցայ բացագանչել ի վերջոյ:

- Այո՛,- պատասխանեց հորեղբայրս,- «Լիթենայրո՛ք ծովը»: Չեմ կարծեր, որ ոեւէ ծովագնաց<sup>12</sup> համարձակի ինծմէ խլել զայն յայտնաբերած ըլլալու պատիւը, նաեւ անունովս կոչելու իրաւունքը...

### ԲԱՅԱՏՐԵԼԷ ԵՏՔ

1. Կազմէ՛ հատուածին նախագիծը՝ անոր ինը մասերը խտացնելով մէկական խորագիր-նախադասութեան մէջ: Ուշադի՛ր՝ յատկապէս Մասեր 1էն 4, ուր խորագիրներդ պէտք է հարազատօրէն արտայայտեն հերոսին աճող մտահոգութիւնն ու տագնապը:

2. Խորագիրներդ վերախմբագրէ՛ այնպէս՝ որ անոնց ամբողջութիւնը դառնայ դէպքերու ընթացքը տոտող ամփոփում մը - 12-15 տողի շուրջ:

- 1. Գետնուղի.- Գետնի տակ փորուած ճամբայ:
- 2. Կրանիթ.- Կարծր ժայռի տեսակ:
- 3. Ուղեկից.- Սիսսին ճամբորդող անձ:
- 4. Չարաբաստիկ.- Գժբախտութիւն բերող:
- 5. Թեք.- Կտրուկ բարձրացող (զառիվեր):
- 6. Տատանում.- Վարանում՝ շարժումներուն մէջ:
- 7. Խարխափել.- Մութին մէջ շօշափել՝ շուրջը զգալու համար:
- 8. Ստոյգ.- Անխուսափելի, վստահ:
- 9. Տեղի տալ.- Ձիջիլ, ետ քաշուիլ:
- 10. Խուրձ.- Սիսսին կապուած իրերու փունջ:
- 11. Սփռում.- Ամէն կողմ տարածում:
- 12. Ծովագնաց.- Ծովային ճամբաներ որոնող անձ:

### Ժիւլ Վերն (1828-1905)



*Ժիւլ Վերն նշանաւոր անուն եղած է ֆրանսական գրականութեան մէջ: Իր մեծաթիւ վէպերը թարգմանուելու են շատ լեզուներու, խանդավառելով յատկապէս պատանիները:*

*Անոնք տեղ կու տան գիտական այնպիսի նորութիւններու, որոնք ատենին երեւակայութիւն էին («գիտական երեւակայութիւն»), բայց յետոյ դարձան իրական. ինչպէս՝ «Ճամբորդութիւն դէպի Լուսին»ի հրթիռը, կամ «20 000 մղոն Ծովերու տակ»ի սուզանաւը:*

Ժիւլ Վերնի գործը այսօր կը պահէ իր շահեկանութիւնը՝ շնորհիւ այդ «գիտա-երեւակայական» երեսին, արկածախնդրական շունչին, եւ իր հերոսներու մարդկային գիծերուն՝ պարկեշտութիւն, քաջութիւն, անձնագոհութիւն...

## ԼՍԱ-ՏԵՍՈՂԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ



Տեսա՞ծ էք մէկնումէկը Ժիւլ Վերնի վէպերու հետեւողութեամբ պատրաստուած շարժանկարներէն: Անոնցմէ՛ յիշատակութեան արժանի է յատկապէս «Քսան Յազար մղոն Ծովերու տակ»ը:

Մեծաթիւ գիտա-երեւակայական յաջող ժապաւէններ պատրաստուած են զանազան շարժա-բեմադրիչներու կողմէ, զանազան հեղինակներու գործերէն:

Լաւ յօրինուած գիտա-երեւակայական վէպ մը կամ շարժանկար մը կը հարստացնէ եւ՛ երեւակայութիւնը, եւ՛ միտքը ընդհանրապէս, անկախ իր փոխանցած գիտական օգտակար տեղեկութիւններէն:

Դասարանին մէջ զեկուցեցէ՛ք ձեր կարդացած մէկ գիտա-երեւակայական գիրքին (կամ տեսած ժապաւէնին) մասին:



## Լեզուական-Գործնական Աշխատանք

**1. Բառերը տեղաւորէ՛ նախադասութիւններուն մէջ՝ լաւ հասկնալէ ետք ամէն մէկուն իմաստը (չորս գոյական եւ չորս ածական).-**

**o գեպնուղի o զանգուած o շքաքար o խեցի**

**o երկրաբանական o սպորերկրեայ o հրաբխային o չայնային**

ա. Փորուած ..... ին պատերը դիտելով՝ գիտնականները կրցան ճշդել այդ ժայռերուն ..... կառոյցը:

բ. Մեր դէմ կը բարձրանային ժայռի հսկայ ..... ներ, որոնք ամբողջութեամբ կազմուած էին ..... լաւայէ:

գ. Բարայրներու եւ ուրիշ ..... վայրերու մէջ, ..... ալիքները դիւրին կը տարածուին եւ աւելի հեռու կը լսուին:

դ. Երկրորդ քարայրին պատերուն վրայ կը շողշողային ..... եր, իսկ գետինը ծածկուած էր ջրային մեծ եւ փոքր կենդանիներու ..... ներով:

**2. Ամէն մէկ բառախումբի դէմ՝ գրէ՛ իր արմատը (երկու տարբեր արմատներ, տարբեր գրելաձեւ ունեցող): Յետոյ բառերը տեղաւորէ՛ նախադասութիւններուն մէջ՝ ուշադրութիւն ընելով ուղղագրութեան.-**

**o ուղեգիծ - ուղեկից - ուղեցոյց** .....

**o ուղղութիւն - ուղղամիտ - ուղղահայեաց** .....

- ա. ....իս հետ հաճելի գրոյց ունեցայ մինչեւ յաջորդ կայարանը:
- բ. Գասընկերդ ..... մարդ պիտի ըլլայ. լաւ տղայ է:
- գ. Կողմնացոյցը, հիւսիսը ցոյց տուող իր սլաքով, մեր նաւերուն ապահով  
.....ն էր:
- դ. Ի՞նչ ..... պէտք է առնեմ՝ կայարանին առջեւ հասնելէ ետք:
- ե. Ինչո՞ւ փոխեր էք յաջորդ ճամբորդութեան համար ձեր նախատեսած  
.....ը:
- զ. .... գիծը հորիզոնականին հետ կը կազմէ 90° աստիճան անկիւն մը:

**3. Հատուածին մէջ գտիր բայական ասոյթները, որոնք կը նշանակեն՝**

- Մաս 4.- *ոչինչ նկատեցի* .....
- Մաս 6.- *արքնցայ՝ մարած վիճակէ* .....
- Մաս 7.- *վերջնական եզրակացութեան չէ եկած* .....
- Մաս 7.- *կեցած էր, դադար առած էր (նաւ)* .....
- Մաս 7.- *իր դիրքէն ետ գնաց, զիջեցաւ* .....

**o Գտնուած իւրաքանչիւր ասոյթով՝ կազմէ՛ նոր նախադասութիւն մը:**

**4. Հետեւող բառերէն՝ գոյական կամ ածական, անջատէ՛ յետադաս մասնիկը: Ծշղէ՛ անոր իմաստը՝ գործածուած առանձին, իբր յետադրութիւն (օրինակ՝ *մեր դպրոցին կից...*)-**

- o ուղեկից o հաղորդակից o գործակից o մրցակից o բախարակից o հայրենակից*
- Տրուած բառերէն առաջին չորսով՝ կազմէ՛ բայեր. գործածէ՛ զանոնք սեփական նախադասութիւններու մէջ:

**5. Շարադրութիւն**

**Ա. նիւթ.-**

- Գտիր եւ կարդա՛ նիւթեր՝ քարայրներու կազմութեան մասին, ընդհանրապէս՝ երկրագունդի երկրաբանական կառոյցին մասին: Յետոյ գրէ՛ խոյզ մը՝ ինքը ընտրելով նիւթիդ սահմանները:

**Բ. նիւթ.-**

- Գրէ՛ գիտա-երեսակայական պատմուածք մը, որ ընդգրկէ դէպքեր՝ պատահած Երկրի մասերեսին կամ արտաքին անջրպետի մէջ (Երկրի շուրջ, Լուսինի կամ ուրիշ մոլորակի մը վրայ): Ջանա՛ պատմածդ մասամբ հիմնաւորել գիտական կամ տրամաբանական տուեալներով: